# Գիտությունների ակադեմիա-50

## *Հանդիսավոր նիստ օպերայի թատրոնում*

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 50-ամյակին էր նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստը, որը տեղի ունեցավ մայիսի 25-ին, Ազգային օպերայի և բալետի թատրոնի շենքում: Գիտնականների հետ դահլիճում էին հանրապետության հասարակայնության ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ: Այստեղ էին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որը գլխավորում է հոբելյանական հանձնաժողովը, Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը, փոխնախագահ Գագիկ Հարությունյանը, վարչապետ Հրանտ Բագրատյանը, ԳԽ նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը, պետնախարարներ, ԳԽ պատգամավորներ:

Հանդիսությանը իրենց մասնակցությունն էին բերել Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Լուիզ Սիմոն-Մանուկյանը, ակադեմիայի արտասահմանյան անդամներ, Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը ակադեմիայի պրեզիդենտ, Հայաստանի ԳԱԱ պատվավոր անդամ Յուրի Սերգեևիչ Օսիպովի գլխավորությամբ:

*Շարունակությունը՝ էջ 4*

# Գիտությունների ակադեմիա-50. հանդիսավոր նիստ օպերայի թատրոնում

Սկիզբը՝ էջ 1

Հանդիսավոր նիստը բացեց ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը:

Ապա ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան անցյալ տարվա նոյեմբերին բոլորեց իր հիսնամյակը, զեկուցման մեջ ասաց Ֆադեյ Սարգսյանը: Այն ստեղծվեց պատերազմի ահեղ օրերին: Այսօր նույնպես դժվարին ժամանակներ են՝ արցախյան պատերազմ, տնտեսական շրջափակում, էներգետիկ ճգնաժամ: Ստեղծված իրավիճակը, ինստիտուտների աշխատանքի նյութատեխնիկական ապահովման անբավարարությունը, տեղեկատվական մեկուսացումը, մյուս հայտնի գործոնները անկասկած իջեցրել են գիտական ներուժի հնարավորությունները: Բայց մենք իրավունք չունենք հրաժարվելու մեր կարեւորագույն նպատակից՝ ակադեմիայի ամբողջ կարողությունները ի սպաս դնել հանրապետության եւ ժողովրդի գործին:

Ֆ. Սարգսյանը խոսեց գիտական պարարտ հողի վրա ծնունդ առած Հայաստանի ակադեմիայի կազմավորման, զարգացման ու բարգավաճման տարիների մասին, նշեց նրա առաջին պրեզիդենտ Հովսեփ Օրբելու, այնուհետեւ 1947 թվականից մինչեւ 1993թ. ապրիլը անընդմեջ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի, գիտության կաճառի ինքնահաստատմանը անուրանալի նպաստ բերած մյուս երախտավորների խոշոր ծառայությունները: Ակադեմիայի անդամները, հարյուրավոր դոկտորներն ու հազարավոր թեկնածուները, մասնագետները, ասաց նա, անցյալի հարուստ ավանդույթների հիման վրա կերտեցին ակադեմիայի ուրույն դեմքը, սկզբունքային նշանակության աշխատություններով հարստացրին հայրենական եւ համաշխարհային գիտությունը:

Սակայն, ինչպես ակադեմիան, այնպես էլ մի շարք գիտական օղակներ լրջորեն ետ են մնում հանրապետության համար կարեւոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրների լուծման ընթացքից: Այդ կապակցությամբ զեկուցողը ընդգծեց գենետիկական պոտենցիալի, մասնավորապես գիտության եւ հոգեւոր մշակույթի ըստ ամենայնի զարգացման անհրաժեշտությունը, որը կարող է հիմք ծառայել համաշխարհային շուկայում Հայաստանի ամենաարագ մուտք գործելուն: Նույնքան կարեւոր են բնական ռեսուրսների օգտագործման գիտական, տեխնիկական եւ տեխնոլոգիական հիմքերի մշակումը եւ ներդրումը:

Զեկուցման մեջ հանգամանորեն շարադրվեց անցած հինգ տասնամյակներին ակադեմիայի գիտական հիմնարկների ձեռքբերումները: Հանրապետության եւ ոչ միայն նրա գիտական մտքի համար ուղենիշներ դարձան Վ. Համբարձումյանի հիմնադրած Բյուրականի աստղադիտարանի, Ալիխանյան եղբայրների հետազոտությունները, հայ մաթեմատիկոսների եւ մեխանիկայի դպրոցների, պատմաբանների ու ֆիզիկոսների հայտնագործություններն ու արժեքավոր հետազոտությունները: Շարունակելով առաջինների գործը, հայ գիտնականների նոր սերունդը հաջողությամբ աշխատում է հաշվողական տեխնիկայի, կառավարման համակարգերի եւ ինֆորմատիկայի, ռոբոտոտեխնիկայի զարգացման ուղղություններում: Ծավալուն աշխատանք է կատարվում տեխնոլոգիաների, ավտոմատացված համակարգիչների մշակման եւ ներդրման բնագավառում: Լուրջ նվաճումներ են գրանցվել հասարակական գիտությունների ասպարեզում:

Ուսումնասիրությունների այս շղթայում առավել ընդգրկված է երեւում այն, ինչ այսօր չի նպաստում առաջընթացին: Զեկուցողն այդ առնչությամբ կարեւորեց ակադեմիայի միջազգային համագործակցության վերականգնումը: Միջոցների բացակայության պատճառով վտանգված են գիտական կապերը: Այդ առումով ուրախանալու առիթ են տալիս համակարգչային տեղեկատվական ցանց ստեղծելու ուղղությամբ վերջերս ծավալված աշխատանքները: Նա շնորհակալություն հայտնեց տիկին Լուիզ Սիմոն-Մանուկյանին եւ ակադեմիայի անդամ Միհրան Աղբաբյանին այդ գործում ցույց տված օգնության համար: Մենք հույս ենք կապում, շարունակեց Ֆադեյ Սարգսյանը, «Հայաստան» հիմնադրամի հետ, որը լուրջ քայլեր է անում ծառացած հարցը լուծելու համար:

Հայաստանում գիտությունների հետագա զարգացման գործում կարեւոր դեր ունի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանագիրը ՀՀ ակադեմիայի մասին, որով այն դիտվում է պետության կողմից հովանավորվող, ինքնակառավարվող գիտական հաստատություն, հանրապետության իշխանությունների պաշտոնական գիտական խորհրդատու: Վերջերս Հայաստանի կառավարությունը հաստատեց այդ հրամանագրի վրա կազմված ազգային ակադեմիայի օրենսդրությունը: Հիշյալ փաստաթղթերը նրա հետագա զարգացման նոր փուլի սկիզբն են, վերջում ասաց Ֆադեյ Սարգսյանը:

Այնուհետեւ ողջույնի խոսքով հանդես եկավ Ռուսաստանի Դաշնության ակադեմիայի պրեզիդենտ Յուրի Օսիպովը: Նա հրապարակեց ակադեմիայի նախագահության ուղերձը, որտեղ բարձր գնահատական է տրված հայ եւ ռուս գիտնականների համագործակցությանը, նրանց համատեղ կատարած հետազոտություններին, ճանաչված է հայկական ակադեմիայի ներդրումը գիտության համաշխարհային գանձարանը: Ռուսաստանի ակադեմիայի հետ գիտական կապերի եւ համագործակցության պայմանագրի կնքումը եւ գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիային անդամագրվելը, ասաց նա, հավաստում են, որ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան կշարունակի իր լուրջ ներդրումն անել գիտության անդաստանում:

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության անդամ Ռաֆայել Ղազարյանը հրապարակեց Գերագույն խորհրդի նախագահության ուղերձը, նշելով, որ խորհրդարանի այսօրվա նիստը ընդհատվել է, որպեսզի պատգամավորները հնարավորություն ունենան մասնակցելու հոբելյանական հանդիսությանը: Ողջույնի նամակ հրապարակեց ԼՂՀ կառավարության փոխնախագահ Ժիրայր Պողոսյանը, ակադեմիայի ղեկավարությանը հանձնելով գորգագործական ֆաբրիկայի արտադրած գորգը, որը վնասվել է պատերազմի ժամանակ եւ վերականգնվել է:

Հոբելյարը ողջունեցին նաեւ Երեւանի պետհամալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, ճարտարագիտական համալսարանի պրեզիդենտ Յուրի Սարգսյանը: Ընթերցվեցին ԱՊՀ երկրներից, արտասահմանյան գիտական կազմակերպություններից, անհատներից ստացված շնորհավորական հեռագրեր:

Հանդիսավոր նիստի մասնակիցների համար համերգ տրվեց հանրապետության գեղարվեստական կոլեկտիվների մասնակցությամբ:

**ՍԱՐԳԻՍ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**
*Արմենպրեսի թղթակից*